ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.05.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/117

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն

Մասնակից՝ «Էլկոմպ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

«Էլկոմպ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ա. Հովսեփյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/21» ծածկագրով գնանշման հարցում, գազի բալոնի, ռետինափողրակի ձեռքբերում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 27.04.2020թ.-ի թիվ 26/26-1/6183-2020 գրությամբ «Էլկոմպ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 22.04.2020թ.-ի թիվ ՊՆ/ՊՆ/02/1306-2020 գրության հիման վրա, 27.04.2020թ.-ին «Էլկոմպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 27.04.2020թ.-ին:

28.04.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, հրապարակվել է www.gnumner.am կայքում և տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/117 համարի ծածկագիրը:

20.05.2020թ.-ին և 27.05.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 20.05.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 27.05.2020թ.-ին:

2. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 22.04.2020թ.-ի թիվ ՊՆ/ՊՆ/02/1306-2020 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/21» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ), ի թիվս այլ մասնակիցների, հայտ են ներկայացրել նաև «Էլկոմպ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Մասնակից): Հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված եղել 03.04.2020թ., և Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4.3 կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ «Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում

է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ մասնակիցը դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ.»: Մասնակիցը հայտով էլեկտրոնային գնումների armeps.am համակարգով որպես հայտի ապահովում ներկայացրել է բանկային երաշխիքի արտատպված (սկանավորված) տարբերակը, սակայն մինչև 06.04.2020թ. Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացրել իր կողմից բանկային երաշխիքի ձևով ներկայացրած հայտի ապահովման բնօրինակը, ուստի 17.04.2020թ. գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, մերժել է «Էլկոմպ» ՍՊ ընկերության հայտը:

Կից ներկայացվում են Մասնակիցների վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով:»:

Ի պատասխան «Էլկոմպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշման, 19.05.2020թ.-ի գրությամբ Պատվիրատուն հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/21» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) «Էլկոմպ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Մասնակից), տեղեկացված լինելով ՀՀ տարածքում գործող սահմանափակումների և Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջների մասին, այնուամենայնիվ 02.04.2020թ. ներկայացրել է հայտ: Հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված եղել 03.04.2020թ., և Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4.3 կետի 4-րդ ենթակետի և 2-րդ մասի 2.5 կետի համաձայն՝ «Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ մասնակիցը դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ.»: Մասնակիցը հայտով էլեկտրոնային գնումների armeps.am համակարգով որպես հայտի ապահովում ներկայացրել է բանկային երաշխիքի

արտապատված (սկանավորված) տարբերակը, սակայն մինչև 06.04.2020թ. Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացրել իր կողմից բանկային երաշխիքի ձևով ներկայացրած հայտի ապահովման բնօրինակը, ուստի 01.04.2020թ. գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, մերժել է Մասնակցի հայտը:

Հարկ եմ համարում նշել, որ ՀՀ ՊՆ գնումների հետ կապված գործառույթների անխափան իրականացումն ապահովելու համար ՀՀ ՊՆ գնումներին մասնակցող բոլոր անձնաց հնարավորություն է տրվել ներկայանալ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչություն և ներկայացնել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը՝ պահպանելով հակահամաճարակային անվտանգության պահանջները:»:

3. <u>«Էլկոմպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 28.04.2020թ.-ին գրությամբ դիմել է «Էլկոմպ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 27.04.2020թ.-ի թիվ 26/26-1/6183-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայանալով նիստին նաև 28.04.2020թ.-ին ներկայացված գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարությունը 27.04.2020թ. թիվ 26/26-1/6183-2020 գրությամբ «Էլկոմպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնած ընթացակարգի՝ ներկայացնում եմ ընկերության դիրքորոշումը:

Մեր կողմից առաջացել է բացթողում, քանի որ ղեկավարվել ենք «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/21» ծածկագրով մրցույթի 7-րդ կետով՝ «Հայտի ապահովում», որտեղ ի տարբերություն 10-րդ կետի՝ «Որակավորման և պայմանագրի ապահովումները» հստակ նշված չի եղել, որ մասնակիցը «Հայտի ապահովման» բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ, փոխարենը այն նշված է եղել նախորդող 4-րդ կետի՝ «Հայտի ներկայացման

կարգը» 4-րդ ենթակետով, ինչը վրիպել է մեր ուշադրությունից Գնումների գործընթացի կազմակերպման նոր տարբերակի կիրառման հանգամանքով: Թեպետ պատվիրատուի ներկայացուցիչը կարող էր էլեկտրոնային փոստով ծանուցել մասնակիցներին՝ ինչպես շտկման պարագայում, որ հրատապ ներկայացվեր բանկային երաշխիքի բնօրինակը, առավել ևս, որ այդ օրերին ՊՆ հրամանով մուտքը ՊՆ վարչական տարածք խստիվ արգելված է եղել այցելուների համար:

Ավելացնեմ նաև, որ.

- պարադոքս է ստացվում, որ եթե մասնակիցը «Հայտի ապահովում» ներկայացնում է բանկային երաշխիքի տեսքով, ապա պետք է ներկայացնի դրա բնօրինակը, եթե կանխիք փողի տեսքով, ապա ոչ,

- և վերջապես, ներկա տնտեսակի իրավիճակի և համաշխարհային համաճարակի պայմաններում ինչ նպատակ է հետապնդում սառեցնել մասնակից ընկերությունների ֆինասական միջոցները կամ կանխիք փողը՝ հասցնելով նրանց զգալի ֆինանսական վնասներ, եթե հնարավոր էր ի սկզբանե օրենքում նախատեսել, որ միայն առաջին տեղը զբաղեցրած մասնակիցն է ներկայացնում բանկային երաշխիքի բնօրինակը: Երբեմն ընթացակարգերը տևում են 3 և ավել ամիսներ, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնվում են ընթացակարգեր, հետագայում ԳԲԽ կայացրած որոշումները վիճարկվում են դատական կարգով, իսկ օրինակ 2-րդ և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցները այդ ընթացքում կրում են անիմաստ վնասներ՝ վճարելով բանկային տոկոսներ, ինչը խոշոր գումարի դեպքում վերջնական արդյունքում հանգեցնում է ընկերությունների սնանկացմանը և լուծարմանը, քանի որ բանկային երաշխիքը կամ կանխիկ փողը չի վերադարձվում ընկերության մինչև ընթացաքարգի ավարտը:

Որոշում կայացնելիս խնդրում եմ հաշվի առնել ինչպես մեր անփորձության աստիճանը, այնպես էլ վերոշարադրյալ հանգամանքները:»:

«Էլկոմպ» ՍՊԸ-ն 14.05.2020թ.-ի ներկայացրած դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Համաձայն ՀՀ Գնումների հետ կապված ընթացակարգերի՝ «Էլկոմպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԷՕ-2020/117 ծածկագրով ընթացակարգի՝ ներկայացնում եմ ընկերության լրացուցիչ դիրքորոշումը:

Մեր կողմից տեղի է ունեցել բացթողում, որը առաջացել է ՀՀ Կառավարության «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» որոշման (16.03.2020թ.) պահանջների կատարման արդյունքում: Ղեկավարվելով սույն

որոշմամբ՝ ինչը կարելի է դիտարկել որպես «Անհաղթահարելի ուժի ազդեցություն (ֆորս-մաժոր)», հնարավոր չի եղել սահմանված ժամկետում՝ մինչև 04.04.2020թ 17:00 պատվիրատուին ներկայացնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/21» ծածկագրով մրցույթի 3-րդ չափաբաժնի «Հայտի ապահովման» բնօրինակը (գտնվել եմ ինքնամեկուսացման մեջ), թեպետ «Հայտի ապահովման» սկանավորված տարբերակը ընկերության հայտին կցված է եղել և ընթացակարգի քարտուղարը կարող էր էլեկտրոնային փոստով ծանուցել, որ անհրաժեշտ է հրատապ ներկայացնել բանկային երաշխիքի բնօրինակը:

Առաջին անհրաժեշտության պարագայում պատրաստակամ եմ ներկայացնել այն::»:

«Էլկոմպ» ՍՊԸ-ն 22.05.2020թ.-ի ներկայացված լրացուցիչ դիրքորոշմամբ հայտնել է նաև հետևյալը.

«Համաձայն ՀՀ Գնումների հետ կապված ընթացակարգերի՝ «Էլկոմպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՅ-ԼՕ-2020/117 ծածկագրով ընթացակարգի՝ ներկայացնում եմ ընկերության լրացուցիչ՝ հավելյալ դիրքորոշումը:

«Էլկոմպ» ՍՊԸ-ն մասնակցելով ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/21» ծածկագրով մրցույթին (3-րդ չափաբաժնի մասով), ս.թ. ապրիլի 2-ին համակարգում ներբեռնել է նշյալ մրցույթի փաստաթղթերի փաթեթը: Մրցույթի բացումը տեղի է ունեցել ս.թ. ապրիլի 3-ի 10:00-ին: Մրցույթի բացումից հետո, ի տարբերություն մրցույթի այլ մասնակիցների, «Էլկոմպ» ՍՊԸ-ին չի առաջարկվել մինչև հաջորդ աշխատանքային օրվա 17:00 մրցույթի պատասխանատու քարտուղարին ներկայացնել «Հայտի ապահովման» բնօրինակը (չի ծանուցվել armepss ավտոմատ համակարգի միջոցով, չի ծանուցվել ընկերության պաշտոնական էլեկտրոնային փոստի միջոցով), սակայն gnumner.am կայքում սկզբից հրապարակել է, որ ընկերությունը «Սահմանված ժամկետում չի ներկայացրել արձանագրված անհամապատասխանության շտկումը», իսկ հետագայում՝ իմ դիտողությունից հետո, շտկել և հրապարակել է ընկերությունը «Սահմանված ժամկետում չի ներկայացրել իր կողմից բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը», արդյունքում՝ մրցույթի գնահատող հանձնաժողովի 17.04.2020թ թիվ 3 արձանագրությամբ՝ հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, մերժվել է «Էլկոմպ» ՍՊԸ-ի հայտը: Ուսումնասիրելով նշյալ հոդվածի պահանջները հանգում ենք այն եզրահանգմանը, որ առկա է հակասություն (հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի

ավարտը շփկել անհամապատասխանությունը, ինչը չի կատարվել «Էլկոմպ» ՍՊԸ-ի հանդեպ՝ 41-րդ հոդված), և որի արդյունքում հնարավոր է բարեխիղճ պատմություն ունեցող ընկերությունը ժամանակավորապես զրկվի ՀՀ պետական գնումներին մասնակցելու գործընթացից, առավել ևս առկա տնտեսական ծանր իրավիճակում և «Անհաղթահարելի ուժի ազդեցություն (ֆորս-մաժոր)» դրության պայմաններում:

Ելնելով վերոշարադրյալից, խնդրում եմ Ձեզ խոհեմությամբ ուսումնասիրել նշյալ փաստարկները և կայացնել արդարացի որոշում, առավել ևս, որ ընկերության գործունեության արդյունքում պատվիրատուն վնասներ չի կրել:»:

4. <u>ՍՑ-LO-2020/117 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից գազի բալոնի, ռետինափողրակի ձեռքբերման նպատակով 26.03.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 03.04.2020թ.-ի ժամը 11:30-ը ներառյալ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Էլկոմպ» ՍՊԸ-ն:

«Էլկոմպ» ՍՊԸ-ն թիվ 3 հավելվածով՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/21» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացնելիս՝ որպես հայտի ապահովում, գնահատող հանձնաժողովին է ներկայացրել «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի կողմից 01.04.2020թ.-ին տրամադրված թիվ COO/0511 բանկային երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը (այսուհետ նաև՝ Երաշխիք):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 03.04.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Էլկոմպ» ՍՊԸ-ն մինչև 06.04.2020թ.-ը ժամը 17:00-ը Հանձնաժողովին չի ներկայացրել իր կողմից բանկային երաշխիքի ձևով ներկայացրած հայտի ապահովման բնօրինակը, ուստի Հանձնաժողովը 17.04.2020թ.-ին, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը,

որոշել է մերժել «Էլկոմպ» ՍՊԸ-ի հայտը, քանի որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/21» ծածկագրով Ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված եղել 03.04.2020թ.-ի ժամը 11:30-ը ներառյալ:

5. **<u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>**.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 27.04.2020թ.-ի թիվ 26/26-1/6183-2020 գրությամբ «Էլկոմպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ հայտի ապահովումը նշված օրենքով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով, հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է

հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի հաստատած հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված լինելու դեպքում՝ հայտի ապահովում և այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոգրյալ իրավանորմի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից գազի բալոնի, ռետինափողրակի ձեռքբերման նպատակով 26.03.2020թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանված եղել 03.04.2020թ.-ի ժամը 11:30-ը ներառյալ, որին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Էլկոմպ» ՍՊԸ-ն թիվ 3 հավելվածով՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/21» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացնելիս՝ որպես հայտի ապահովում, գնահատող հանձնաժողովին է ներկայացրել «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի կողմից 01.04.2020թ.-ին տրամադրված թիվ COO/0511 բանկային երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Հանձնաժողովի 03.04.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Էլկոմպ» ՍՊԸ-ն մինչև 06.04.2020թ.-ը ժամը 17:00-ն Հանձնաժողովին չի ներկայացրել իր կողմից բանկային երաշխիքի ձևով ներկայացրած հայտի ապահովման բնօրինակը, ուստի գնահատող հանձնաժողովը 17.04.2020թ.-ին, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, որոշել է մերժել «Էլկոմպ» ՍՊԸ-ի հայտը, քանի որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/21» ծածկագրով Ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված եղել 03.04.2020թ.-ը:

Ելնելով վերոնշյալ փաստական հանգամանքներից, դրանց՝ իրավական նորմերի հետ համադրման արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն մեկ փաստաթղթի համար՝ գնային առաջարկի, ընդ որում՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հայտում ներառվող փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանություններն ենթակա են շտկման, ուստի տվյալ դեպքում գնահատող հանձնաժողովի կողմից «Էլկոմպ» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշումն ոչ իրավաչափ է և չի բխում Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջներից, քանի որ Երաշխիքի բնօրինակ տարբերակը Կարգով սահմանված ժամկետում չներկայացնելու պարագայում Հանձնաժողովը պետք է մեկ աշխատանքային օրով կասեցներ նիստը և դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցեր վերջինիս՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, ինչի արդյունքում Հանձնաժողովի կողմից խախտվել է Կարգի 41-րդ կետը:

Անդրադառնալով Մասնակցի կողմից դիրքորոշմամբ նշված այն հանգամանքին, որ «Էլկոմպ» ՍՊԸ-ն ղեկավարվելով ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հաստատելու մասին» որոշմամբ, հնարավորություն չի ունեցել սահմանված ժամկետում ներկայացնելու հայտի ապահովման բնօրինակը, քանի որ գտնվել է ինքնամեկուսացման մեջ, ինչը հանգեցրել է պարտավորության խախտմանը, որտեղ բացակայում է «Էլկոմպ» ՍՊԸ-ի մեղքը, ապա Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրը նախատեսել է, որ պարտավորությունը խախտած ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձն ազատվում է դրա համար պատասխա-նատվությունից, եթե ապացուցում է, որ պարտավորության պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի հետևանքով:

Անհաղթահարելի ուժի կիրառումը պետք է պայմանավորված լինի այնպիսի հանգամանքների զուգորդմամբ, որոնք անհնարին են դարձնում կողմերի ստանձնած պարտավորությունների կատարումը, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով:

Միևնույն ժամանակ, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձին անհաղթահարելի ուժի հիմքով պատասխանատվությունից ազատելը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, պայմանավորված է արտակարգ և անկանխելի, այսինքն՝ այնպիսի բացառիկ, անսովոր, եզակի հանգամանքների ի հայտ

գալով, որոնք հաղթահարելը տվյալ պարագայում օբյեկտիվորեն անհնարին է: Ընդ որում, ի հայտ եկած հանգամանքի արտակարգ և անկանխելի լինելը յուրաքանչյուր դեպքում պետք է դիտարկել ու գնահատել կոնկրետ պարտավորության բնույթի և դրա կատարման պայմանների շրջանակներում *(տե՛ս, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի ընդդեմ «Վլադ Հակոբյանի անվան «Համակցված կերերի գործարան» ՓԲԸ-ի թիվ ԵԷԴ/0888/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):*

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով, Մասնակցի կողմից 06.04.2020թ.-ին բանկային երաշխիքի բնօրինակ տարբերակը գնահատող հանձնաժողովին հանձնելն եղել է անհնարին՝ պայմանավորված ՀՀ կառավարության 16.03.2020թ.-ի «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» թիվ 298-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում 2020 թվականի մարտի 16-ից ժամը 18:30-ից սկսած մինչև 2020 թվականի ապրիլի 14-ը ժամը 17:00-ն ներառյալ ժամկետով արտակարգ դրություն հայտարարելու հետ:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 27.04.2020թ.-ի թիվ 26/26-1/6183-2020 գրությամբ «Էլկոմպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/117 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**